

ՀՈԼՈՎԱՆ ԶԱՄԱԿԱՐԳԸ XV դԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրության հարցը մշտապես եղել է բանասերների ուշադրության կենտրոնում: Հիշատակարանները համարվում են պատմական անգնահատելի սկզբնաղբյուրներ, որոնց քննությունը հարուստ նյութ է ընձեռում հատկապես հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Հիշատակարանների լեզվական քննության անդրանիկ օրինակները Լիանա Ղուկասյանի և Գևորգ Ջահուկյանի աշխատություններն են, որոնք մասամբ են լրացնում հիշատակարանների լեզվական հետազոտության բացը: Գ. Ջահուկյանը գրում է. «Թվում է, թե հայ ձեռագիր հիշատակարանների լեզվի պատմական ուսումնասիրությունը կարող է շատ նոր նյութեր տալ միջին գրական հայերենի ու աշխարհաբարի պատմության, այլև հայերենի բարբառային երևույթների տարածական ու ժամանակային բաշխման համար... համակարգչային մշակումը այդ սպասելիքը հարկ եղած չափով չարդարացրեց»¹:

Մեր համոզմամբ, հիշատակարանների լեզվական քննության անհրաժեշտություն կա ըստ առանձին դարերի: Եվ այս շրջանաբաժանմամբ միայն հնարավոր կլինի տալ վերջիններիս լեզվական բնութագիրը:

Ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ հիշատակարանը XV դարում արդեն ձևավորված կաղապար էր, ուստի գրիչները հիմնականում փորձում էին չչեղվել ընդհանուր ձևից²:

Այն, որ հիշատակարանը կաղապար էր դարձել, հաստատվում է հետևյալ փաստով. 1476 թվականին Երուսաղեմում կազմված ժողովածու-մանրուսմունքի 181թ-182թ էջերում շարադրված է մի հետաքրքիր հիշատակարանային նյութ, որտեղ բաց են թողնված հիշատակարանի կարևորագույն բաղադրիչները՝ գրչի անունը, տեղը, ժամանակը³: Ըստ էության՝ սա հենց հիշատակարանի կաղապար է, և կարծում ենք, որ նման երևույթը եզակի չէ, և վերջիններիս առկայությունը նույնպես իր ազդեցությունն է գործում հիշատակարանների լեզվի վրա:

Գրավոր խոսքը, ի տարբերություն բանավորի, պահպանողական է, և այստեղ շատ ուշ են արձանագրվում լեզվական ցանկացած տիպի փոփո-

¹ Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 8:

² Շատ հավանական է, որ կաղապարները սկսել են կիրառվել ավելի վաղ, քանի որ դեռևս XIII դարի հիշատակարաններում նկատելի են միանման կառուցվածք ունեցող մի շարք հիշատակարաններ:

³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դր.», աշխատասիրությամբ Ա. Ս. Սաթևոսյանի, Եր., 1988, էջ ԺԸ (տե՛ս ծանոթագրությունը):

խությունները, քանի որ առկա է գրական և ընդունված նորմերից շեղվելու, այսինքն՝ ոչ այնքան գրագետ լինելու համար ամբաստանվելու երկյուղ, հատկապես հիշատակարաններում, որի գրիչները շատ հաճախ ներողութուն են խնդրում իրենց ձեռագրի և սխալների համար: Հենց այս մտավախությունն էլ պատճառներից մեկն է, որ ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս հիշատակարանային կաղապարներ: Թեև հիշատակարանները, լինելով գրավոր խոսքի յուրօրինակ դրսևորում, կրում են նաև բանավոր խոսքի ազդեցությունը, սակայն XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում շարունակում էր գերակայել գրաբարը: Ընդ որում, այդ գերակայությունն առկա է ինչպես քերականական, այնպես էլ հնչյունական, բառակազմական և շարահյուսական մակարդակներում: Հավանաբար հենց այդ է պատճառը նաև, որ հիշատակարաններում զարմանալիորեն սակավադեպ են բարբառային երևույթները:

Բայց որքան էլ գրիչները փորձել են հարազատ մնալ գրաբարին, այնուամենայնիվ ժամանակը, ինչպես նաև գրավոր ու բանավոր խոսքի միջև եղած զգալի տարբերությունները իրենց կնիքն են թողել հիշատակարաններում:

Սույն հոդվածը նվիրված է XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հոլովման համակարգի առանձնահատկությունների քննությանը: Մեր ուշադրությունը հատկապես կենտրոնացած է եղել գրաբարյան ընդունված կանոններից կատարված շեղումները և միջինհայերենյան նորամուծությունները բացահայտելու վրա: Նշենք նաև, որ քննում ենք ինչպես անվանական, այնպես էլ դերանվանական հոլովման համակարգերը:

Անվանական հոլովում: Հոլովների կազմության առանձնահատկությունները:

XV դարի հիշատակարաններում հոլովների կազմությունն ունի հետևյալ պատկերը. եզակի ուղղականն ու հայցականը տարբերակվում են նախադասության մեջ իրենց կատարած դերով, իսկ ձևաբանորեն դրանք նույնանուն են, բացառությամբ որոշյալ առման դեպքում հայցականին ավելացող *զ* նախդրի: Հոգնակի թվում այս հոլովները ստանում են համապատասխան հոգնակերտներ, իսկ *-ք* հոգնակերտի դեպքում գործում է *-ք/-ս* հերթագայությունը: Հիշատակարաններում հաճախադեպ է սույն հերթագայունից շեղումը, այսինքն՝ *-ք/-ս* սպասվող փոփոխությունը տեղի չի ունենում, ինչպես հետևյալ օրինակներում՝ «...պաղատանս ձեզ ընծայեմ յիշել և զմեզ, և զհոգևոր և զմարմնաւոր ծնողքն մեր, զերջանիկ և զերանաշնորհ քարոզքն կենաց՝ զարժանիքն յիշման զերախտաւոր հարքն մեր...» (Ա,339)⁴, *զծնողքն մեր, զեղբարքն իմ, զհաւրեղբարքն իմ* (Ա,252), *զխրատիչք, զուսուցիչքն* (Ա,376), *զքոյրք, զտղայք, զկենդանիք, զննջեցեալք* (Ա,464) և այլն: Այսպիսի օրինակները հիշատակարաններում բազմաթիվ են:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ XV դարի հիշատակարաններում առկա էր ուղղական և հայցական հոլովների նույնացման միտումը, որն աշխարհաբարում արդեն ամրակայվում է:

⁴ «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մաս 1, Եր., 1955, էջ 339: Այսուհետ հղումները տրվելու են ըստ մասերի և էջերի:

Սեռական և տրական հոլովներում հիմնական շեղումը գրաբարի համեմատությամբ հոլովատիպերի փոփոխությունն է: Օրինակ՝ հայտնի է, որ գրաբարում *ի*-ով վերջավորվող գոյականները հիմնականում հոլովվում են *ո-ա* խառը թեքմամբ՝ *մատանի>մատանւոյ>մատանեաւ* կամ *պատանի>պատանւոյ>պատանեաւ*: Հիշատակարանների լեզվում այս տիպի հոլովումները հիմնականում պարզեցվում են, և հոլովվում են *ո* պարզ հոլովմամբ՝ *մատանի>մատանոյ>մատանով* և այլն⁵: Իսկ գրաբարյան *ո* հոլովման այն բառերում, որոնք ունեին *ի* բուն (ինչպես՝ *որդի, ոգի, ոսկի*), և հոլովման ժամանակ գործում էր *ի>ւ* հնչյունափոխությունը (*որդի>որդւոյ*), XV դարի հիշատակարաններում բնի *-ի* ձայնավորն ընկնում է՝ *որդի>որդոյ>որդով, հոգի>հոգոյ>հոգով*. օր.՝ «*ի շահ և յօգուտ հոգոց մերոց*» (Ա,251): Այս շրջանում նշմարվում է *-ի*-ով վերջավորվող բառերի *ու* հոլովումը, որով ավարտվում է այդ հոլովատիպի ձևավորման պատմական զարգացումը (ւոյ>ոյ>ու)՝ «*իշատակ իւր հոգուն*» (Ա,402), «*Աստուած ուղորմի նոցա հոգուն, ամէն*» (Ա,506), «*ի վայելումն եղբարորդուն իմոյ*» (Բ,123): Հիշատակարաններում նկատվում է նաև միջին հայերենին բնորոշ մեկ այլ երևույթ՝ տարբեր հոլովումների բառեր անցնում են *ի* արտաքին թեքման, ինչպես՝ *զլուխ>զլխոյ>զլխի* օր.՝ «*ի զլխի ցաւես, թէ որպես նեղիմ...*» (Ա,145): Քննվող դարաշրջանի հիշատակարաններում *-ոջ* վերջավորությամբ սեռական և տրական հոլովների կազմությունները խիստ սակավ են: Հատուկ անունների հոլովման դեպքում պատկերը շատ ավելի բարդ է. նույնիսկ միևնույն հիշատակարանում կարելի է տեսնել նույն բառը տարբեր հոլովիչներով, ինչպես՝ *Սըսոյ-Սըսայ-Սըսու* (Բ,273):

Բացառական հոլովը գրաբարում և միջին հայերենում ուներ կազմության նույն կաղապարը՝ *ի(յ) նախդիր + տրական հոլովով դրվող բառ + հոլովակազմիչ*: Սույն կաղապարից շեղումներ եղել են դեռևս գրաբարում, սակայն միջնադարյան մատենագրության և հատկապես հիշատակարաններում այս կաղապարը պարզեցվում է: XV դարի հիշատակարաններում բացառականի կազմության ձևերը հետևյալ պատկերն ունեն.

- Բացառականի կազմության կանոնավոր ձևեր՝ *յաստուածային բուրաստանես* (Բ,143), *փոխեցաւ յաշխարհես* (Ա,185), *ազատեաց զեկեղեցին ի պարտուց* (Բ,285) և այլն:

- Երկակի նախդրավոր կառույցներ՝ ձայնավորով սկսվող բառերի դեպքում՝ *կեսք ի յահէ* (Ա,31), *ի յերկրէ ի յերկիր* (Բ,286): Սա ամենատարածված երևույթն է, որ առկա էր նաև գրաբարում:

- Բացառականի աննախդիր ձևեր՝ *որ է հիւսիսոյ կողմանէն* (Բ,34), *Սիւնեաց նահանգէն* (Բ,124), *աւրհնեալք հաւրէն* (Բ,127), *անհոգել են այս ամէն ցանկութենէն կենցաղոյս* (Բ,286) և այլն:

Գիշտ է, հիշատակարաններում բացառականը հիմնականում նախդրավոր է, սակայն աննախդիր կառույցների զգալի թիվը ցույց է տալիս պարզեցման միտումը:

⁵ Հարկ է նշել, որ պարզեցման այս միտումներն առկա են դեռևս գրաբարում, սակայն միջին հայերենում դրանք արդեն դառնում են օրինաչափություն: Բացառություն չեն նաև հիշատակարանները, և այս մասին նշում է նաև Լ. Հովսեփյանն իր «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (Եր., 1997) աշխատության մեջ (տես էջ 28-29):

Գործիական հոլովը գրաբարում և միջին հայերենում կազմվում է մասնիկավորմամբ՝ եզակի թվում ստանալով *-ւ, -վ, -ք* մասնիկները, իսկ հոգնակի թվում՝ եզակի գործիականին ավելացնելով *-ք* հոգնակերտը:

-ի -ով վերջավորվող բառերը եզակի գործիականում ունեին *-ւով* վերջավորությունը՝ *որդւով, հոգւով* և այլն, բնականաբար հոգնակիում՝ *որդւովք, հոգւովք*: Սակայն, ինչպես նշեցինք, պարզեցման ձգտող լեզուն չի պահում *-ւոյ* վերջավորությունը, դրա փոխարեն տեսնում ենք *-ոյ*: Այսինքն՝ գործիականում ունենում ենք արդեն *-ով* վերջավորությունը, որն էլ ընդհանրանում և ամրապնդվում է՝ դառնալով գործիականի հիմնական հոլովակազմիչը՝ *հոգով, որդով*:

Ներգոյական հոլովի կազմությունը հիմնականում որևէ փոփոխություն չի կրում հիշատակարաններում, քանի որ «Միջին հայերենում ներգոյական հոլովի իմաստի արտահայտման հիմնական միջոցը դեռևս գրաբարում լայն տարածում ունեցող կազմությունն է՝ *ի* նախդիր + եզակի տր. և հոգնակի հայցական»⁶: Այս կաղապարից շեղումներ XV դարի հիշատակարաններում չենք նկատել, բացառությամբ ծայնավորից առաջ նախդրի կրկնությունը՝ «*Եւ ոմանք պագապուրծ (sic!) լինելով ի յայրս*» (Ա,31), որը հատուկ էր և բացառական հոլովի կազմությանը: Ներգոյականի *-ում*-ով կառույց վկայված է մեկ անգամ՝ «*...որ այս գեղունս զմեզ կերակրել են...*» (Ա,489):

Յոգնակի թվի կազմությունը:

Ինչպես գիտենք, գրաբարում հոգնակի թվի ընդհանրական ցուցիչը *ք*-ն է, և հոգնակի ուղղականը կազմվում է հիմնականում եզակի ուղղական + *ք* կաղապարով՝ *բառք, վարպետք, տունք* և այլն: Յոգնակի ուղղականի կազմությանը մասնակցում են նաև *-ինք՝ անծինք, -ունք՝ հոգունք, դրունք* և այլ կառույցներ (*աղբերք, աւուրք*, որտեղ հոգնակի ուղղականը կազմված է մեծ մասամբ եզակի սեռական + *ք* կաղապարով): *ք*-ն մասնակցում է նաև բաղադրյալ հոգնակերտների կազմությանը, ինչպես՝ *-որայք, -երանք, -ունք, -իկք* և այլն: XV դարի հիշատակարաններում հիմնականում պահպանվել են հոգնակիականության գրաբարյան օրինաչափությունները, սակայն նկատելի են նաև որոշ նորամուծություններ: Կիրառության ամենամեծ թիվը կազմում են գրաբարյան *ք*-ն և նրանով բաղադրված հոգնակերտ մասնիկները: Բերենք մի շարք բնորոշ օրինակներ՝

-ք - *Այս զծածք հանդիսադիր խմբից* (Բ,275),

-իկ + ք - *յորմէ սասանեցան մարդիկք, և եղև սրղութիւն* (Ա,225),

-որայք - *ի վաղուց հետէ ցանկայի տեսանել աշխարհն Յոնաց՝ վանորայքն* (Ա,312), *Իսկ ի յՊՅԶ. թվին էառ նոյն Աքանդարն զՎան և զայլ բերդորայքն* (Ա,376),

-ունք - *ընդ սարկաւագունս և միայնակեցունք* (Ա,339), *Ահայ ազատեցար շլրած աչկունք, կզացաց (sic!) շլնեկունք, կտորած ոտկունք* (Ա,497), *զնորաբողբոջ կուսանքն, եթէ սարկաւագունքն* (Ա,636),

-անք - *թէ գրեանքս չէին, նա աշխարհս ամէն ի կռապաշտութիւն անկանէր* (Ա,148):

Գրաբարից վկայված են նաև մի շարք այլ հոգնակերտներ⁷, որոնք

⁶ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Եր., 1975, էջ 77:

⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 20-22:

նույնպես գործածվում են հիշատակարաններում, ինչպես՝

-անի - *Եւ այլ բազում քաղաքանին / Ջորս քանդեցին եւ գերեցին* (Ա,278), *դասաւորեայ ընդ կուսանին Յոփսիմեայ* (Ա,611),

-տի - *Արանց, կանանց և ընդ մանկտին, / Ջարսն թաղեալ մինչ կենդանին, / Յողով, ջրովըն հեղծուցին, / Իսկ ըզմատաղ տրդայ մանկտին / Ջայն կալոտիս ձիոցն արկին* (Ա,279-280): Նույն հիշատակարանում հանդիպում ենք նաև բաղադրյալ հոգնակերտի՝ *տի+ք բաղադրիչներով. Ո՛հ, գեղեցիկ կերպ ու սուրաթ / Այն մանկտեկացն, որ կորուսան* (Ա,284),

-ան - *Անթիւ ըռզակ էր գոր տարան, / Աղէկ ձիան և շատ ուղտան* (Ա,282):

Գրաբարյան վերոնշյալ հոգնակերտներից բացի՝ XV դարի հիշատակարաններում առատորեն վկայված են միջինհայերենյան *-եր/ներ* հոգնակերտները, սակավադեպ են *-նի* և *-ստան* հոգնակերտները՝

-եր/ներ – *զի իմ մեղքն բազմացեալ և զանապատներն աւերեալ* (Ա,418), *որ զսակաւ շարակներս գծագրեցի* (Բ,238), *Գրեցաւ տաղերս ձեռամբ անհմաստ գրչի սուտանուն Աստուածատուր դպրի* (Ա,267), *մեծ պապերուն Խաչատուր քահանային, Յակոբ քահանային եւ քեռուն իմ... մեծ մամերուն* (Ա,547), *զհարսներ* (Բ,224), *թռներն* (Բ,298) և այլն,

-նի - *եղէ ի գրութիւն աստուածահաճոյ տիրապէս աղօթնոյս* (ծայնավորից առաջ *ի-ն* սղվել է, Բ,84)..., *եւ զանազան թարթիպնին տեսնուս և զարմանաս* (Բ,116),

-ստան - *խլեցին զբերդի պարոնին զձիան և զջորեստան* (Բ,273):

Մեր կարծիքով, դժվար է պնդել, թե հոգնակի թվի կազմության հարցում գրիչները հարազատ են մնացել գրաբարին. միջինհայերենյան բազմաթիվ հոգնակերտների մեջ (ավելի քան չորս տասնյակ)⁸ զգալի թիվ են կազմում հենց գրաբարից ժառանգված հոգնակերտ մասնիկները: Այս երևույթը բնական պետք է համարել, քանի որ քերականական բազմաթիվ ձևեր գրաբարյան փուլից հետո էլ շարունակում էին կիրառվել ավանդույթի ուժով: Իսկ ձեռագրերի ընդօրինակման հարցում այդ ավանդույթը շատ մեծ ազդեցություն ուներ:

Փոփոխություն են կրում նաև գրաբարյան անկանոն հոլովումները: Հիշատակարանների լեզվում գործածվում են *հայր, մայր, քոյր, եղբայր, գիւղ, ակր, տէր* բառերը, որոնցից գրեթե անփոփոխ է մնում *հայր, մայր* և *եղբայր* բառերի հոլովման հարացույցը: Նշյալ հարացույցից շեղվող մեկ դեպք ենք նկատել՝ *հանդերձ իմ եղբորացովս* (Ա,542), որը, մեր կարծիքով, պետք է հասկանալ «եղբայրացուներ» իմաստով, որտեղ *ու-ն* շեշտափոխության հետևանքով ընկել է (*եղբոր+աց+ու+ով*): Հետաքրքիր ձևով է վկայված *տանուտրայք* (Բ,248) կառույցը, փոխ. *տանուտեարք*, որը քանիցս հանդիպում է հիշատակարաններում: Կարծում ենք, որ այս ձևը կրել է հաջորդող *տանտիկնայք* բառի ազդեցությունը և հեշտությամբ բացատրվում է համաբանությամբ. *եա* երկբարբառն էլ ընկել է:

Հիշատակարաններում սակավադեպ են *այր, կին* և *տիկին* բառերը, որոնց հոլովածներում փոփոխություններ գրեթե վկայված չեն: Բացառություն է մեկ անգամ հանդիպող *այրոջ* կառույցը, որ դարձյալ բացատրվում

⁸ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, էջ 38:

է կիւն>կնոջ համաբանութեամբ՝ և այրոջն նորին Կիրակոսին (Բ,402):

Անկանոն հոլովման հիմնական փոփոխությունները դրսևորվում են քոյր և գիւղ բառերի հարացույցներում: Նշենք նաև, որ քոյր բառի փոփոխությունները վկայված են դեռևս XIII դարի հիշատակարաններում. գրաբարյան քոյր>քեռ ձևի փոխարեն հիշատակարաններում վկայված են հնագույն քոյր>քուեր կամ նոր քուրոջ ձևերը, ինչպես՝ ...եւ իւր քուրոջն խոնգահն (Բ,391):

Գիւղ անկանոն հոլովման բառը հիշատակարանների լեզվում ենթարկվում է տարբեր փոփոխությունների, որոնցից ավելի հաճախադեպ են հետևյալ ձևերը՝ ի գեաւղջէ (Ա,205), ի գեաւղս (Ա,215), ի գեօղս (Բ,224), գեղի (Ա,291), ի գեղէն (Բ,165) և այլն: Այս տարածությունները հասկանալի են, քանի որ դեռևս գրաբարում գիւղ բառը գրության տարբեր ձևեր է ունեցել՝ գեաւղ, գեօղ, գեւղ, գիւղ, սեռական, տրական և բացառական հոլովները կազմվել են -ջ հոլովակերտ մասնիկով՝ գեղջ, հոգնակի թվում բառը արտաքին թեքում ունի -ի հոլովիչով՝ գիւղից⁹, պարզեցման ձգտող լեզուն ազատվում է այս բազմազանությունից: XV դարի հիշատակարաններում վկայված են առանց -ջ հոլովակազմիչի և ի արտաքին թեքման գիւղ բառի հոլովածներ (գիւղ>գեղ+ի)՝ գեղի (Ա,291, Բ,264), գեղին (Բ,293), ի գեղէն (Բ,165, 278), և ի հակակշիռ միջին հայերենի՝ վկայված է ներգոյականի գեղումս (Ա,489) ձևը: Ի արտաքին թեքման ազդեցությամբ պետք է բացատրել նաև գեղջին (Բ,294) ձևը, որտեղ գեղջ-ն այլևս չի գիտակցվել որպես սեռական-տրականի հոլոված և երկրորդ անգամ հոլովվել է: Երկու անգամ վկայված է հոգնակի թվով՝ զգեղերն (Բ,286) և գեղորէից (Ա,601) ձևերով: Գեղորէից (գեղորայք) հոգնակի սեռականի ձևը բացատրվում է վանորայք և բերդորայք բառերի համաբանությամբ, որոնք բազմիցս վկայված են հիշատակարաններում: Գիւղ բառը մեկ անգամ վկայված է n արտաքին թեքմամբ՝ գեղոյ (Բ,376), մեկ անգամ էլ՝ ու արտաքին թեքմամբ՝ գեղում(ս) (Ա,489): Բառաբարդման դեպքում էլ արմատը հնչյունափոխ գեղ-ն է՝ գեղաքաղաք (Բ,150), գեղավանք (Բ,146), գեղաւան (Ա,344):

Կարող ենք ասել, որ գիւղ բառի փոփոխված հարացույցը վկայված է գրեթե ամբողջությամբ, և այդ օրինակները մեկտեղելով՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

Եզակի	Յոգնակի
Ուղղ. գիւղ	-
Յայց. (զ)գիւղ	զգեղերն (Բ,286)
Սեռ. գեղի (Ա,291, Բ,264) գեղոյ (Բ,376) գեղու (Բ,378)	գեղորէից (Ա,601)
Տր. գեղին (Բ,293)	-
Բաց. ի գեղէն (Բ,165, 278)	-
Գործ. -	-
Ներգ. գեղում(ս) (Ա,489)	-

⁹ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 58:

Դերանվանական հոլովում:

Անվանական և դերանվանական հոլովումների տարբերակիչ հատկանիշը որոշ հոլովածներում առկա տարահիմքությունն է (սուպլետիվիզմ): Ըստ այդմ՝ որոշ դերանուններ հոլովվում են դերանվանական հոլովմամբ, իսկ մյուսները՝ դարձյալ անվանական: XV դարի հիշատակարաններում դերանունների հոլովման համակարգն ունի բավական խառը պատկեր. գրաբարյան ձևերին զուգահեռ կիրառված են միջինհայերենյան դերանունները, որոնք, ինչպես հայտնի է, մեծ թիվ են կազմում, նույնիսկ «կան այնպիսի դերանվանածներ, որոնք հարացույցների մեջ չեն խմբավորվում, մնում են մեկուսի»¹⁰: Չատկապես առատ են ստացական և ցուցական դերանվանածները, իսկ մյուս դերանունները համեմատաբար սակավ շեղումներ են դրսևորում գրաբարի համեմատությամբ:

Անձնական դերանունները գործածությամբ զիջում են մյուս դերանուններին, քանի որ հայերենում բայն իր դիմաթվային վերջավորությամբ արդեն իսկ արտահայտում է անձնական դերանվան իմաստը:

Չոգնակի ուղղականում հանդիպող շեղումը, որը միջին հայերենում աստիճանաբար դառնում է օրինաչափ, գրաբարյան *մեք* դերանվան *մենք* ձևն է, որը XV դարի հիշատակարաններում խիստ սակավադեպ է՝ *մենք* (Ա,346, Բ,140):

Սեռական/տրական հոլովներում երբեմն նկատվում է շփոթ, ինչպես հետևյալ օրինակում՝ «*Քրիստոս Աստուած, նորայ զերկնից արքայութիւն պարգեւէ*» (Ա,461): Սեռականի փոխարեն պետք է գործածված լիներ տրական, այսինքն՝ *նմա*:

Բացառական հոլովի կազմությունը հիմնականում աննախդիր է: Մյուս կողմից՝ սակավ, բայց հանդիպում են գրաբարյան բացառականի այնպիսի կառույցներ, որտեղ բուն բացառականի իմաստն արդեն չի գիտակցվում¹¹: Ավելի շատ արտահայտում են սաստկականության իմաստ՝ «գոր ես *ինձէն* ստացայ» (Ա,78) (այսինքն՝ ես *ինքս*): Գրաբարյան ձևերին զուգահեռ կիրառվում են նաև զուտ միջինհայերենյան կառույցներ՝ *ի մեզանէ* (Ա,103), «*Ապա այսոր նման անդէպ չէր եղեալ, իսկ խիստ կու ամաչեմ ի ձեզնէ, թողութիւն արարէք*» (Ա,245): Բացառականի այս կառույցներում ընկնում է *-նջ* հոլովակերտը, իսկ *-անէ* վերջավորությունն աստիճանաբար ընդհանրանում է:

Գործիական հոլովով դրված անձնական դերանունները գրաբարի համեմատությամբ շեղումներ գրեթե չունեն: *Ինքն* դերանունը հոգնակի գործիականում հանդիպում է հետևյալ նոր ձևերով՝ *իւրաեաւքն* (Ա,468), *իւրաաւքն* (Ա,469):

Անձնական դերանունների ներգոյական հոլովածները սովորաբար լայն կիրառություն չունեն: Չիշատակարանների լեզվում ևս խիստ սակավադեպ են այդ ձևերը և հիմնականում չեն շեղվում գրաբարից:

Դերանուններից ամենալայն կիրառությունն ունեն ցուցականները: Չիշատակարաններում ևս ցուցական դերանունները մյուս դերանունների համեմատությամբ ամենաշատն են գործածված: Այստեղ վկայված են

¹⁰ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, էջ 84:

¹¹ Ավելի մանրամասն տես Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 78:

գրաբարի բոլոր ցուցականները՝ *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն*: Շեղումները գրաբարի համեմատությամբ վերաբերում են թեք ձևերին. ուղղական և հայցական հոլովների ձևավորմամբ այս դերանունները հիմնականում գրաբարատիպ են: Ներկայացնում ենք շեղումները XV դարի հիշատակարաններում՝ *նացա* (Բ,140), *այսոր* (Ա,245), *այնոր* (Ա,229), *սրա* (Ա,483), *սապես* (Ա,413): Ներգոյականի մեկ հետաքրքիր ձև է վկայված Աղթամարում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում, որտեղ երևում է *-ում* հոլովակազմիչը՝ *յայսպիսում* ժամանակի (Ա,376) և այլն:

Ցուցական դերանուններին կիրառության հաճախականությամբ հաջորդում են ստացական դերանունները, որոնք նույնպես հիշատակարանների լեզվում դրսևորում են բավական խառը պատկեր գրաբարյան ձևերի համեմատությամբ: Այստեղ էլ վկայված գրաբարյան բոլոր ստացականների կողքին տեսնում ենք միջինհայերենյան կամ բարբառային դերանվանածներ՝ *մերոյինս* (Ա,174), *ծերիւ* (Ա,181), *ուրենց* (Ա,506), *նացա* (Բ,140), *մերայովն*, *ծերայոցն* (Բ,213) և այլն:

Հարցահարաբերական, անորոշ և որոշյալ դերանունների կիրառություններում մեր քննած հիշատակարաններում էական շեղումներ չեն նկատվել:

Որպես ամփոփում, նշենք հետևյալը.

ա. Հիմնական հոգնակերտը XV դարի հիշատակարաններում շարունակում է մնալ գրաբարյան *ք*-ն: Սակայն վերջինի կողքին առատորեն վկայված են միջինհայերենյան *-եր/ներ* հոգնակերտները:

բ. Ամբողջությամբ նույնացել են ուղղական և հայցական հոլովները: Որպես տարբերակիչ հատկանիշ մնում է *զ* նախդիրը:

գ. Ձևով նույնացել են նաև սեռական և տրական հոլովները: *Ի* արտաքին թեքումն աստիճանաբար դառնում է ընդհանրական, պարզեցվում են խառը թեքումները: *-Ոջ* վերջավորությամբ սեռական և տրական հոլովների ձևեր գրեթե վկայված չեն: Խառն է հատուկ անունների հոլովման պատկերը: Անկանոն կամ զարտուղի հոլովումները ևս պարզեցվում են:

դ. Բացառական հոլովը XV դարի հիշատակարանների լեզվում առավելապես նախդրավոր կառույց է, սակայն աննախդիր բացառականի բազմաթիվ օրինակները վկայում են սույն հոլովի աստիճանական պարզեցման մասին:

ե. Վկայված օրինակները ցույց են տալիս, որ գործիական հոլովում աստիճանաբար անրակայվում է *-ով* հոլովակերտ մասնիկը:

զ. Ներգոյական հոլովը էական փոփոխություններ չի կրում, այն հիմնականում նախդրավոր կառույց է. առավելապես կիրառվում է *ի + հոգն.* հայց. կառույցը: *-Ում* վերջավորությամբ երկու բառ է վկայված XV դարի հիշատակարաններում:

է. Դերանունների կիրառության տեսանկյունից ամենամեծ թիվը կազմում են ցուցական և ստացական դերանունները: Գրաբարյան ձևերին զուգահեռ վկայված են միջինհայերենյան դերանվանածներ: Աստիճանաբար նկատելի է *մեք* անձնական դերանվան փոփոխությունը *մենք*-ի:

Մեր կարծիքով, XV դարի հիշատակարաններում հոլովման համակարգը դեռևս գրաբարյան է, սակայն գրաբարյան ձևերի կողքին առատորեն վկայված են միջինհայերենյան կառույցները, որոնք ուրվագծում են լեզվի զարգացման անկասելի ընթացքը:

Բանալի բառեր – հիշատակարաններ, գրաբար, միջին հայերեն, անվանական հոլովում, դերանվանական հոլովում, անկանոն հոլովումներ, հոգնակի թվի կազմութուն

ХАЧИК АРУТЮНЯН – Система склонения в колофонах армянских рукописей XV века. – В статье рассмотрены основные особенности системы склонения, засвидетельствованные в колофонах (памятных записях) армянских рукописей XV века. Ставилась цель выявить отличия от системы склонений габара, а также новообразований, присущих среднеармянскому языку. Исследованы системы как именного, так и местоименного склонения.

Анализ выявил, что система склонения в колофонах не единообразна. Параллельно с древнеармянскими грамматическими формами используются также среднеармянские формы, что отражает процесс развития языка.

Ключевые слова: колофоны, древнеармянский и среднеармянский, именное и местоименное склонения, неправильные склонения, формирование множественного числа

ԿՈՏԻԿ ԻՐԱԿՅՈՒՆՅԱՆ – The System of Declension in the Colophons of Armenian Manuscripts of the XV Century. –The present article investigates the features of the declension system in the colophons of Armenian manuscripts of the 15th century. The aim of this study was to identify any deviations from the standard declension norms of Classical Armenian (Grabar), as well as unveil the innovations of the Middle Armenian. Both nominal and pronominal declension systems have been examined. Studies show that the declension system in the colophons is not uniform. Grammatical forms of Old Armenian are used in parallel with their Middle Armenian counterparts, thus testifying to the ongoing nature of language development.

Key words – Colophons, Classical Armenian and Middle Armenian, nominal and pronominal declension systems, irregular declension, formation of plurals